



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Ա Շ Խ Ա Տ Ա Կ Ա Ր Գ Ա Յ Ի Ն Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 403-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԵՎ 415-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քննության առնելով «ՀՀ Վճռաբեկ դատարանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 403-րդ հոդվածի և 415-րդ հոդվածի 1-ին մասի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը կարճելու մասին առաջարկությունը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Ձ Ե Ց**.

1. «Գործի վարույթը կասեցնելու և ՀՀ Սահմանադրական դատարանի դիմելու մասին» 2019 թվականի սեպտեմբերի 18-ի որոշմամբ (Քրեական գործ ԵԴ/0426/11/18) Վճռաբեկ դատարանը դիմել է Սահմանադրական դատարան և խնդրել որոշել Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) «403-րդ հոդվածում, 415-րդ հոդվածի 1-ին մասում սահմանված ընթացակարգերի և կառուցակարգերի՝ ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասին, 63-րդ հոդվածի 1-ին մասին, 75-րդ, 79-րդ հոդվածներին, 171-րդ հոդվածի 2-րդ մասին համապատասխանության հարցն այնքանով, որքանով գործն ըստ էության չլուծող դատական ակտի իրավաչափությունը բացառապես վճռաբեկ բողոքի առարկայի և սահմանների շրջանակում ստուգելիս Վճռաբեկ դատարանը, Սահմանադրական դատարանի՝ 2019 թվականի մայիսի 7-ի թիվ ՍԴՈ-1459 որոշմամբ վերոնշյալ քրեադատավարական նորմերի հետ անմիջականորեն փոխկապակցված՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի 2-րդ մասին տրված մեկնաբանության պայմաններում, առանց գործը նոր քննու-

թյան ուղարկելու իրավասության, զրկված է վերջնական որոշում կայացնելու և իրավունքի խախտումը փաստելով այն վերացնելու հնարավորությունից»:

Դիմումը Սահմանադրական դատարան է մուտքագրվել 2019 թվականի սեպտեմբերի 23-ին:

2. Դիմողը, ընդունելի համարելով Սահմանադրական դատարանի ՍԴՈ-1459 որոշմամբ արտահայտված այն դիրքորոշումը, որ դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացումը և ողջամիտ ժամկետում գործի քննությունն ապահովելու նպատակով՝ գործն ըստ էության չլուծող դատական ակտերի վերանայումը խնդրո առարկա հարցի վերաբերյալ վերջնական որոշում կայացնելու միջոցով, որպես կանոն, պետք է ավարտվի Վճռաբեկ դատարանում, գտնում է, որ նշված մոտեցումը բացարձակ բնույթ կրել չի կարող, քանի որ Օրենսգրքի 403-րդ հոդվածից և 415-րդ հոդվածի 1-ին մասից բխում է, որ վերադաս դատական ատյանը, սահմանափակված լինելով վիճարկվող դատական ակտում քննարկված հարցերի շրջանակով, չի կարող վերստուգիչ լիազորությունն իրացնելիս անդրադառնալ ստորադաս դատարանում քննարկման առարկա չդարձված հանգամանքներին:

Դիմողը փաստում է. «մի կողմից՝ սահմանափակված լինելով վճռաբեկ բողոքի առարկայով և սահմաններով, մյուս կողմից՝ ապահովելով բողոքաբերի դատական մատչելիության և դատական պաշտպանության իրավունքների արդյունավետ իրականացման երաշխիքները՝ օբյեկտիվորեն զրկված է իրավունքի ենթադրյալ խախտման փաստի արձանագրման պայմաններում գործով վերջնական որոշում կայացնելու հնարավորությունից»: Վճռաբեկ դատարանը եզրակացնում է, որ գործն ըստ էության չլուծող դատական ակտի վերանայման արդյունքում անձի իրավունքի իր կողմից հայտնաբերած խախտումը հաճախ արդար դատաքննության երաշխիքներին համահունչ կարող է վերականգնվել ոչ այլ կերպ, քան գործը նոր քննության ուղարկելու միջոցով:

3. Օրենսգրքի վիճարկվող դրույթները դիտարկելով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի և Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ պատասխանողը եկել է հետևության, որ «օրենսդիրը, ամրագրելով

Վճռաբեկ դատարանում դատական վերանայման սահմանափակ բնույթը, հետապնդել է իրավաչափ նպատակ. ապահովել կողմերի հետևողականությունն իրենց նյութաիրավական ու դատավարական շահերի պաշտպանության գործում»:

Օրենսգրքի 403-րդ հոդվածի և 415-րդ հոդվածի 1-ին մասը դիտարկելով Սահմանադրական դատարանի ՍԴՈ-1459 որոշման լույսի ներքո՝ պատասխանողը նշում է, որ միանգամայն ողջամիտ է միջանկյալ դատական ակտերի վերանայումը որպես կանոն Վճռաբեկ դատարանում ավարտելու պահանջը, սակայն այդ կանոնից **պետք է նախատեսել բացառություններ**՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ գործնականում հնարավոր են իրավիճակներ, երբ վճռաբեկ բողոքի առարկան սահմանափակված է բացառապես ընթացակարգային բնույթի խախտումների վերաբերյալ հիմնավորումներով՝ առանց անդրադառնալու ստորադաս դատարաններում ըստ էության վիճարկվող խնդրի իրավաչափության հարցին:

Պատասխանողի կարծիքով Վճռաբեկ դատարանի կողմից իրավունքի խախտման փաստն արձանագրելուց հետո անձն այլևս հնարավորություն չունի վիճարկվող խնդրի իրավաչափության հարցը բարձրացնել ստորադաս դատարաններում՝ միջանկյալ դատական ակտի վերանայման վարույթն ավարտված լինելու պատճառով:

Լրացուցիչ բացատրությամբ պատասխանողը պնդել է, որ «Օրենսգրքի 404-րդ և 415-րդ հոդվածներով նախատեսված սահմանափակումները չեն կրում և չեն կարող կրել բացարձակ բնույթ, քանի որ կողմերի իրավական հետևողականության ապահովման իրավական շահին հակակշիռ իրավական շահը՝ դատական սխալների ուղղումը, որոշակի պայմաններում կարող է էապես մեծարժեք լինել, որպես գերակա հանրային շահ: Ուստի, հիմնարար բնույթ կրող դատական սխալների հայտնաբերման պարագայում Վճռաբեկ դատարանն իրավասու է դուրս գալ բողոքարկման սահմաններից և վերացնել այդ դատական սխալները»:

4. Ուսումնասիրելով դիմումը և պատասխանողի գրավոր բացատրությունները, ինչպես նաև Օրենսգրքի վերաբերելի իրավակարգավորումները՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ սույն գործի վարույթը ենթակա է կարճման հետևյալ հիմնավորմամբ.

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Սահմանադրական դատարանը գործի քննության ցանկացած փուլում կարճում է գործի վարույթը, եթե բացահայտվել են նույն օրենքի 29-րդ հոդվածով նախատեսված՝ գործի քննությունը մերժելու հիմքեր, որոնցից են, ի թիվս այլնի՝ առաջադրված հարցերի Սահմանադրական դատարանին ենթակա չլինելը (1-ին մասի 1-ին կետ) և դիմողի տվյալ հարցով Սահմանադրական դատարան դիմելու համար իրավասու չլինելը (1-ին մասի 2-րդ կետ):

Վճռաբեկ դատարանն Օրենսգրքի վիճարկվող դրույթները դիտարկել է բացառապես Սահմանադրական դատարանի՝ 2019 թվականի մայիսի 7-ի ՍԴՈ-1459 որոշմամբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի 2-րդ մասին տրված մեկնաբանության շրջանակներում և **բարձրացրել է իր կողմից գործն ըստ էության չլուծող դատական ակտերի բեկանման դեպքում գործը նոր քննության ուղարկելու անհնարինության հարցը՝** պայմանավորված Սահմանադրական դատարանի այն մեկնաբանությամբ, որ «Վճռաբեկ դատարանի կողմից գործն ըստ էության չլուծող դատական ակտերի վերանայման արդյունքում նոր դատական ակտ կայացնելու լիազորությունը տվյալ հարցի վերաբերյալ վերջնական որոշում կայացնելն է»:

4.1. Օրենսգրքի «Դատավճռի ու որոշումների վերանայումը վճռաբեկության կարգով» վերտառությամբ 403-րդ հոդվածի համաձայն՝ «Վճռաբեկ դատարանը վերանայում է վերաքննիչ դատարանի՝ **գործն ըստ էության լուծող և գործն ըստ էության չլուծող դատական ակտերը**, ինչպես նաև վերաքննիչ դատարանի՝ գործն ըստ էության չլուծող դատական ակտերի վերանայման արդյունքում կայացված որոշումները»:

Դիմողի կողմից բարձրացված հարցն անմիջականորեն չի առնչվում 403-րդ հոդվածի կարգավորումներին, քանի որ ցանկացած դեպքում Վճռաբեկ դատարանը սահմանադրական իր լիազորությունները կարող է իրականացնել միայն **վերաքննիչ դատարանի վերոնշյալ դատական ակտերը վերանայելու միջոցով**:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 71-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ Սահմանադրական դատարան դիմող դատարանը պետք է հիմնավորի իր դիրքորոշումը նորմատիվ իրավական ակտի վիճարկվող դրույթի՝ Սահմանա-

դրությանը հակասելու վերաբերյալ:

Վճռաբեկ դատարանը որևէ կերպ չի հիմնավորել իր դիրքորոշումը և չի անդրադարձել այն հարցերին, թե վերաքննիչ դատարանի վերոնշյալ դատական ակտերի վերանայման վերաբերյալ օրենսդրական կարգավորումն ինչու՞ է հակասում Սահմանադրությանը, արդյո՞ք այդ ակտերը չպետք է վերանայվեն, կամ այլ ակտեր ևս պետք է ենթակա լինե՞ն վերանայման, կամ այդ ակտերը ոչ թե պետք է վերանայվեն, այլ վերանայումից տարբերվող ա՛յլ գործընթաց պետք է տեղի ունենա և այլն:

4.2. Դիմողն Օրենսգրքի 415-րդ հոդվածի 1-ին մասի Սահմանադրությանը չհամապատասխանելու մասին նույնպես հիմնավորումներ չի ներկայացրել, այլ փաստացի պնդել է, որ Վճռաբեկ դատարանում գործի քննության սահմաններ նախատեսող այդ դրույթի պայմաններում, անձի իրավունքների պաշտպանությունն ապահովելու համար պետք է հնարավորություն ունենա գործն ըստ էության չլուծող դատական ակտերի վերանայման արդյունքում գործն ուղարկել նոր քննության:

Սահմանադրական դատարանը վերստին արձանագրում է, որ «նոր դատական ակտ» եզրույթը չի նույնանում Օրենսգրքի 419-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված դատական ակտերից որևէ մեկի հետ, և օրենսդիրը, կիրառելով «նոր դատական ակտ» եզրույթը, նկատի չի ունեցել հիշյալ հոդվածի 1-ին մասում թվարկված այն լիազորությունները, որոնք վերապահված են Վճռաբեկ դատարանին՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերի վերանայման դեպքերում:

Միջանկյալ դատական ակտերի վերանայման արդյունքում տվյալ հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի կողմից վերջնական որոշում կայացնելու ընդհանուր կանոնից բացառություններ նախատեսելն անհրաժեշտ է համարել նաև պատասխանողը:

Սահմանադրական դատարանը նշում է, որ հիմնական իրավունքների և ազատությունների արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգերի և ընթացակարգերի ամրագրման սահմանադրական պահանջների կենսագործման նկատառումներից ելնելով՝ օրենսդրական զարգացումների ապահովումն Ազգային ժողովի իրավասությունն է, և հետևաբար՝ դիմողի բարձրացրած հարցը ենթակա չէ Սահմանադրական դատարանին:

Հաշվի առնելով վերոշարադրյալը և հիմք ընդունելով Սահմանադրության 169-րդ հոդվածի 4-րդ մասը, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 60-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը, 29-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը, ինչպես նաև 71-րդ հոդվածի 1-ին և 5-րդ մասերը՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

«ՀՀ Վճռաբեկ դատարանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 403-րդ հոդվածի և 415-րդ հոդվածի 1-ին մասի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը կարճել:

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՆԱԽԱԳԱՀ**



Հ. ԹՈՎՄԱՍՅԱՆ

17 մարտի 2020 թվականի
ՍԴԱՈ-66